

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ**

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:** Բնակչության դրամական եկամուտները 2001թ. հունվարին կազմել են 46643.7 մլն.դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 0.3 %-ով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 52065.2 մլն.դրամ և ավելացել 15.8 %-ով:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2001թ. հունվարին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 40132.9 մլն.դրամ (86.0 %), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 1932.8 մլն.դրամ (4.2 %), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 5988.3 մլն.դրամ (12.8 %):

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2001թ. հունվարին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռն աճել է 7.0 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռը՝ 6.3 տոկոսային կետով:

**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:** Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2001թ. հունվարին 2000թ. հունվարի նկատմամբ նվազել են 3.7 %-ով:

**Աշխատանքի վարձատրություն:** 2001թ. հունվարին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9 հազար սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 22067 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 14.1%: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 14348 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 17.1%, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար՝ 28267 դրամ և 14.4 %:

**2000թ. դեկտեմբերին անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի**

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Տոկոսներով ընդամենի նկատմամբ		Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
<b>Ընդամենը</b>	<b>26461</b>	<b>21094</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>116.4</b>	<b>113.9</b>
Արդյունաբերություն	41269	30689	156.0	145.5	139.5	128.5
Գյուղատնտեսություն	19008	15806	71.8	74.9	129.3	120.9
Անտառտնտեսություն	11849	10632	44.8	50.4	126.8	119.4
Տրանսպորտ	37145	32941	140.4	156.2	105.7	102.3
Կապ	61577	43163	232.7	204.6	115.8	113.1
Շինարարություն	40688	36162	153.8	171.4	118.5	98.4

## 1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Տոկոսներով ընդամենի նկատմամբ		Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
Առևտուր, հանրային սնունդ	10658	7858	40.3	37.3	98.8	70.4
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղ-սպասարկում	30124	23893	113.8	113.3	122.2	123.9
Հաշվողական-տեղեկատվական սպասարկում	26067	18661	98.5	88.5	68.0	96.8
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13210	12609	49.9	59.8	98.0	111.0
Կրթություն	12888	11849	48.7	56.2	117.6	118.7
Մշակույթ	10914	9900	41.2	46.9	111.4	108.3
Արվեստ	12605	10482	47.6	49.7	108.6	106.0
Գիտություն և գիտական սպասարկում	20505	16449	77.5	78.0	101.7	101.2
Վարկավորում և պետապ	130832	73533	494.4	348.6	129.2	126.1
Կառավարման ապարատ	46431	32620	175.5	154.6	101.3	111.5
Այլ	34200	25214	129.2	119.5	119.1	122.5

2000թ. դեկտեմբերին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 41.2 (մշակույթ) - 49.9 (առողջապահություն և սոցիալական ապահովություն)տոկոսի սահմաններում:

Անվանական միջին աշխատավարձն զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 4.9 անգամ, կապի համակարգում՝ 2.3, կառավարման համակարգում՝ 1.8, արդյունաբերության մեջ՝ 1.6, շինարարության մեջ՝ 1.5, տրանսպորտում՝ 1.4, այլ ճյուղերում՝ 1.3 և բնակարանային-կոմունալ տնտեսության, կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.1 անգամ: